ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊՊԾ-ՄԱԾՁԲ-1/5

ք. Երևան «12» 02 2021թ.

<< Պետական Պահպանության Ծառայությունը>>, ի դեմս Պետական պահպանության ծառայության պետ Ս. Հովհաննիսյանի, որը գործում է <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի և Պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Տոյոտա Երևան>> ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Վ. Գզրարյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պետական պահպանության ծառայությանը պատկանող <<Toyota>> մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է առավելագույնը 13000000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Պետական պահպանության ծառայություն	«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20	ք. Երևան Ծովակալ Իսակովի 22
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՎՀՀ 01557589
աշխատակազմի գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ
Հ/հ 900011004497	Հ/հ 16062005562600
ՀՎՀՀ 00006796	

Պետ՝ Ա. Հովհաննիսյան

Գլխավոր տնօրեն՝ Վ. Գզրարյան

Հավելված N 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50111130/1	<<Toyota>> մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում համաձայն հավելված 1-ին կից գնացուցակի	դրամ	13000000	1	ք. Երևան Պռոշյան փ. 1-ին փակուղի 20	Սկիզբ - պայմանագրի կնքման պահից ավարտ - 20.12.2021թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011004497
ՀՎՀՀ 00006796

ԿԱՏԱՐՈՂ
«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք. Երևան Ծովակալ Իսակովի 22
ՀՎՀՀ 01557589
«ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ
Հ/հ 16062005562600

Պետ՝ Ս. Հովհաննիսյան

Գլխավոր տնօրեն՝ Վ. Գզարյան

Տոյոտա մակնիշի ավտոմեքենաներ N1՝ սպասարկում են հետևյալ գներով

"ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ" ՍՊԸ
Ծովակալ Իսակովի պող. 22
0004 Երևան, Հայաստան

TOYOTA

"TOYOTA YEREVAN" LLC
22 Admiral Isakov ave.,
0004 Yerevan, Armenia

1. 7.000 կմ-ը մեկ փոխվում է շարժիչի յուղը և շարժիչի յուղի զտիչը, որի արժեքը կազմում է 22.160 ՀՀ դրամ/1լիտր շարժիչի յուղը 4.300 ՀՀ դրամ և յուղի տարողությունը 4.2 լիտր, յուղի զտիչը 3.500 ՀՀ դրամ, տափօղակ 600 ՀՀ դրամ:
2. 15.000-20.000 կմ փոխվում է առջևի արգելակման կոճղակը, որի արժեքը կազմում է 24.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
3. 30.000-35.000 կմ փոխվում է հետևի արգելակման կոճղակը, որի արժեքը կազմում է 20.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
4. 14.000կմ-ը մեկ փոխվում է օդի զտիչը, որի արժեքը կազմում է 7.000 ՀՀ դրամ:
5. 20.000 կմ-ը մեկ փոխվում է սրահի զտիչը, որի արժեքը կազմում է 10.000 ՀՀ դրամ:
6. 40.000 կմ-ը մեկ փոխվում է վառելիքի զտիչը, որի արժեքը կազմում է 49.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 12.000 ՀՀ դրամ:
7. 120.000-150.000 կմ փոխվում է շարժիչի հովացման հեղուկը, որի արժեքը կազմում է 15.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
8. 70.000-80.000 կմ փոխվում են վառոցքի մոմերը, որոնց 4 հատի արժեքը կազմում է 32.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 5.000 ՀՀ դրամ:
9. 80.000 կմ փոխարինվում է ԱՓՏ-ի յուղը, զտիչը և միջադիրը, որոնց արժեքը կազմում է՝ յուղը 40.000 ՀՀ դրամ, զտիչը 52.000 ՀՀ դրամ, միջադիրը 9.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 18.000 ՀՀ դրամ:
10. 80.000-90.000 կմ փոխարինվում է գեներատորի փոկը, որի արժեքը կազմում է 17.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 14.000 ՀՀ դրամ:
11. Անվաբացքի կարգաբերման աշխատանքի գինը կազմում է 13.000 ՀՀ դրամ:
12. Անվադողերի փոխարինման և հավասարակշռման արժեքը կազմում է 12.000 ՀՀ դրամ:
13. 20.000 կմ-ը մեկ օգտագործվում է ինժեկտորային համակարգը մաքրող հեղուկ, որի արժեքը կազմում է 10.000 ՀՀ դրամ:
14. 40.000 կմ-ը մեկ փոխարինվում է արգելակման հեղուկը,որի արժեքը կազմում է 6.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
15. 50.000 կմ-ը մեկ փոխարինվում են առջևի արգելակման սկավառակները,որոնց 2 հատի արժեքը կազմում է 88.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
16. 50.000 կմ-ը մեկ փոխարինվում են հետևի արգելակման սկավառակները,որոնց 2 հատի արժեքը կազմում է 92.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
17. Ապակեմաքրիչի 2 ռետինների արժեքը կազմում է 19.000 ՀՀ դրամ:
18. Առջևի 1 հարվածամեղմիչի արժեքը կազմում է 37.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 16.000 ՀՀ դրամ:
19. Հետևի 1 հարվածամեղմիչի արժեքը կազմում է 32.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 16.000 ՀՀ դրամ:
20. Գնդաձև հոդակապի 1 հատի արժեքը կազմում է 33.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 8.000 ՀՀ դրամ:
21. Առջևի կայունարարի 2 վռանների արժեքը կազմում է 30.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
22. Առջևի կայունարարի կանգնակի 1 հատի արժեքը կազմում է 42.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:

E-mail: info@toyota.am
URL: www.toyota.am
Tel: (+374 10) 777 010
Fax: (+374 10) 776 800

ALWAYS A
BETTER WAY

ՅԱՎԱՆ" ՍՊԸ
ակովի պող. 22
երևան, Հայաստան

TOYOTA

"TOYOTA YEREVAN" LLC
22 Admiral Isakov ave.,
0004 Yerevan, Armenia

23. Առջևի 1 հարվածամեղմիչի պատյանի արժեքը կազմում է 15.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 16.000 ՀՀ դրամ:
24. Դիմապակու արժեքը կազմում է 233.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 50.000 ՀՀ դրամ:

Հարգանքներով
Գլխավոր տնօրեն
Վ.Գզրարյան

E-mail: info@toyota.am
URL: www.toyota.am

Tel: (+374 10) 777 010
Fax: (+374 10) 776 800

ALWAYS A
BETTER WAY

Տոյոտա մակնիշի ավտոմեքենաներ N2՝ սպասարվում են հետևյալ գներով

"ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ" ՍՊԸ
Ծովակալ Իսակովի պող. 22
0004 Երևան, Հայաստան

TOYOTA

"TOYOTA YEREVAN" LLC
22 Admiral Isakov ave.,
0004 Yerevan, Armenia

1. 7.000 կմ-ը մեկ փոխվում է շարժիչի յուղը և շարժիչի յուղի զտիչը, որի արժեքը կազմում է 34.630 ՀՀ դրամ/1լիտր շարժիչի յուղը 4.300 ՀՀ դրամ և յուղի տարողությունը 7.1 լիտր, յուղի զտիչը 3.500 ՀՀ դրամ, տափօղակ 600 ՀՀ դրամ:
2. 15.000-20.000 կմ փոխվում է առջևի արգելակման կոճղակը, որի արժեքը կազմում է 43.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
3. 30.000-35.000 կմ փոխվում է հետևի արգելակման կոճղակը, որի արժեքը կազմում է 30.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
4. 14.000կմ-ը մեկ փոխվում է օդի զտիչը, որի արժեքը կազմում է 17.000 ՀՀ դրամ:
5. 20.000 կմ-ը մեկ փոխվում է սրահի զտիչը, որի արժեքը կազմում է 19.000 ՀՀ դրամ:
6. 40.000 կմ-ը մեկ փոխվում է վառելիքի զտիչը, որի արժեքը կազմում է 19.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
7. 120.000-150.000 կմ փոխվում է շարժիչի հովացման հեղուկը, որի արժեքը կազմում է 25.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
8. 70.000-80.000 կմ փոխվում են վառոցքի մոմերը, որոնց 8 հատի արժեքը կազմում է 64.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 10.000 ՀՀ դրամ:
9. 80.000 կմ փոխարինվում է ԱՓՏ-ի յուղը, զտիչը և միջադիրը,որոնց արժեքը կազմում է՝ յուղը 56.000 ՀՀ դրամ, զտիչը 25.000 ՀՀ դրամ, միջադիրը 7.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 18.000 ՀՀ դրամ:
10. 80.000-90.000 կմ փոխարինվում է գեներատորի փոկը, որի արժեքը կազմում է 25.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 14.000 ՀՀ դրամ:
11. Անվաբացքի կարգաբերման աշխատանքի գինը կազմում է 14.000 ՀՀ դրամ:
12. Անվադողերի փոխարինման և հավասարակշռման արժեքը կազմում է 12.000 ՀՀ դրամ:
13. 20.000 կմ-ը մեկ օգտագործվում է ինժեկտորային համակարգը մաքրող հեղուկ, որի արժեքը կազմում է 10.000 ՀՀ դրամ:
14. 40.000 կմ-ը մեկ փոխարինվում է արգելակման հեղուկը, որի արժեքը կազմում է 6.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 25.000 ՀՀ դրամ:
15. 50.000 կմ-ը մեկ փոխարինվում են առջևի արգելակման սկավառակները,որոնց 2 հատի արժեքը կազմում է 96.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
16. 50.000 կմ-ը մեկ փոխարինվում են հետևի արգելակման սկավառակները,որոնց 2 հատի արժեքը կազմում է 128.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
17. Ապակեմաքրիչի 3 ռետինների արժեքը կազմում է 27.000 ՀՀ դրամ:
18. Առջևի 1 հարվածամեղմիչի արժեքը կազմում է 160.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 18.000 ՀՀ դրամ:
19. Հետևի 1 հարվածամեղմիչի արժեքը կազմում է 45.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 18.000 ՀՀ դրամ:
20. Երկեղջյուրի 1 հատի արժեքը կազմում է 225.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 20.000 ՀՀ դրամ:
21. Առջևի կայունարարի 2 վռանների արժեքը կազմում է 18.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
22. Հետևի կայունարարի 2 վռանների արժեքը կազմում է 14.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:

E-mail: info@toyota.am
URL: www.toyota.am
Tel: (+374 10) 777 010
Fax: (+374 10) 776 800

ALWAYS A
BETTER WAY

ԱՎԱՆ" ՍՊԸ
ակովի պող. 22
ինան, Հայաստան

TOYOTA

"TOYOTA YEREVAN" LLC
22 Admiral Isakov ave.,
0004 Yerevan, Armenia

23. Առջևի կայունարարի կանգնակի 1 հատի արժեքը կազմում է 80.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
24. Հետևի կայունարարի կանգնակի 1 հատի արժեքը կազմում է 254.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
25. Դիմապակու արժեքը կազմում է 420.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 50.000 ՀՀ դրամ:

Հարգանքներով
Գլխավոր տնօրեն
Վ.Գզրարյան

E-mail: info@toyota.am
URL: www.toyota.am

Tel: (+374 10) 777 010
Fax: (+374 10) 776 800

ALWAYS A
BETTER WAY

Տոյոտա մակնիշի ավտոմեքենաներ N3՝ սպասարվում են հետևյալ գներով

"ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ" ՍՊԸ
Ծովակալ Իսակովի պող. 22
0004 Երևան, Հայաստան

TOYOTA

"TOYOTA YEREVAN" LLC
22 Admiral Isakov ave.,
0004 Yerevan, Armenia

1. 7.000 կմ-ը մեկ փոխվում է շարժիչի յուղը և շարժիչի յուղի զտիչը, որի արժեքը կազմում է 30.330 ՀՀ դրամ/1լիտր շարժիչի յուղը 4.300 ՀՀ դրամ և յուղի տարողությունը 6.1 լիտր, յուղի զտիչը 3.500 ՀՀ դրամ, տափօղակ 600 ՀՀ դրամ:
2. 15.000-20.000 կմ փոխվում է առջևի արգելակման կոճղակը, որի արժեքը կազմում է 39.000 ՀՀ դրամ,փոխարինումը՝7.000 ՀՀ դրամ:
3. 30.000-35.000 կմ փոխվում է հետևի արգելակման կոճղակը, որի արժեքը կազմում է 30.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝7.000 ՀՀ դրամ:
4. 14.000կմ-ը մեկ փոխվում է օդի զտիչը, որի արժեքը կազմում է 17.000 ՀՀ դրամ:
5. 20.000 կմ-ը մեկ փոխվում է սրահի զտիչը, որի արժեքը կազմում է 19.000 ՀՀ դրամ:
6. 40.000 կմ-ը մեկ փոխվում է վառելիքի զտիչը, որի արժեքը կազմում է 19.000 ՀՀ դրամ,փոխարինումը՝7.000 ՀՀ դրամ:
7. 120.000-150.000 կմ փոխվում է շարժիչի հովացման հեղուկը, որի արժեքը կազմում է 25.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝15.000 ՀՀ դրամ:
8. 70.000-80.000 կմ փոխվում են վառոցքի մոմերը, որոնց 6 հատի արժեքը կազմում է 48.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝10.000 ՀՀ դրամ:
9. 80.000 կմ փոխարինվում է ԱՓՏ-ի յուղը, զտիչը և միջադիրը,որոնց արժեքը կազմում է՝յուղը 56.000 ՀՀ դրամ, զտիչը 25.000 ՀՀ դրամ, միջադիրը 7.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝18.000 ՀՀ դրամ:
10. 80.000-90.000 կմ փոխարինվում է գեներատորի փոկը, որի արժեքը կազմում է 37.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝14.000 ՀՀ դրամ:
11. Անվաթացքի կարգաբերման աշխատանքի գինը կազմում է 14.000 ՀՀ դրամ:
12. Անվադողերի փոխարինման և հավասարակշռման արժեքը կազմում է 12.000 ՀՀ դրամ:
13. 20.000 կմ-ը մեկ օգտագործվում է ինժեկտորային համակարգը մաքրող հեղուկ, որի արժեքը կազմում է 10.000 ՀՀ դրամ:
14. 40.000 կմ-ը մեկ փոխարինվում է արգելակման հեղուկը, որի արժեքը կազմում է 6.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝25.000 ՀՀ դրամ:
15. 50.000 կմ-ը մեկ փոխարինվում են առջևի արգելակման սկավառակները, որոնց 2 հատի արժեքը կազմում է 98.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝15.000 ՀՀ դրամ:
16. 50.000 կմ-ը մեկ փոխարինվում են հետևի արգելակման սկավառակները, որոնց 2 հատի արժեքը կազմում է 104.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝15.000 ՀՀ դրամ:
17. Ապակեմաքրիչի 3 ռետինների արժեքը կազմում է 28.000 ՀՀ դրամ:
18. Առջևի 1 հարվածամեղմիչի արժեքը կազմում է 161.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝18.000 ՀՀ դրամ:
19. Հետևի 1 հարվածամեղմիչի արժեքը կազմում է 45.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝18.000 ՀՀ դրամ:
20. Երկեղջյուրի 1 հատի արժեքը կազմում է 211.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝20.000 ՀՀ դրամ:
21. Առջևի կայունարարի 2 վռանների արժեքը կազմում է 14.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝7.000 ՀՀ դրամ:
22. Հետևի կայունարարի 2 վռանների արժեքը կազմում է 20.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝7.000 ՀՀ դրամ:

E-mail: info@toyota.am
URL: www.toyota.am
Tel: (+374 10) 777 010
Fax: (+374 10) 776 800

ALWAYS A BETTER WAY

...ՍՊԸ
...պող. 22
...ան, Հայաստան

TOYOTA

"TOYOTA YEREVAN" LLC
22 Admiral Isakov ave.,
0004 Yerevan, Armenia

23. Առջևի կայունարարի կանգնակի 1 հատի արժեքը կազմում է 69.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
24. Հետևի կայունարարի կանգնակի 1 հատի արժեքը կազմում է 72.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
25. Դիմապակու արժեքը կազմում է 361.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 50.000 ՀՀ դրամ:

Հարգանքներով
Գլխավոր տնօրեն
Վ.Գզրարյան

E-mail: info@toyota.am
URL: www.toyota.am

Tel: (+374 10) 777 010
Fax: (+374 10) 776 800

ALWAYS A
BETTER WAY

Տոյոտա մակնիշի ավտոմեքենաներ N4՝ սպասարվում են հետևյալ գներով

"ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ" ՍՊԸ
Ծովակալ Իսակովի պող. 22
0004 Երևան, Հայաստան

TOYOTA

"TOYOTA YEREVAN" LLC
22 Admiral Isakov ave.,
0004 Yerevan, Armenia

1. 7.000 կմ-ը մեկ փոխվում է շարժիչի յուղը և շարժիչի յուղի զտիչը, որի արժեքը կազմում է 24.310 ՀՀ դրամ/1լիտր շարժիչի յուղը 4.300 ՀՀ դրամ և յուղի տարողությունը 4.7 լիտր, յուղի զտիչը 3.500 ՀՀ դրամ,տափօղակ 600 ՀՀ դրամ:
2. 15.000-20.000 կմ փոխվում է առջևի արգելակման կոճղակը, որի արժեքը կազմում է 33.000 ՀՀ դրամ,փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
3. 30.000-35.000 կմ փոխվում է հետևի արգելակման կոճղակը, որի արժեքը կազմում է 22.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
4. 14.000կմ-ը մեկ փոխվում է օդի զտիչը, որի արժեքը կազմում է 10.000 ՀՀ դրամ:
5. 20.000 կմ-ը մեկ փոխվում է սրահի զտիչը, որի արժեքը կազմում է 10.000 ՀՀ դրամ:
6. 40.000 կմ-ը մեկ փոխվում է վառելիքի զտիչը, որի արժեքը կազմում է 37.000 ՀՀ դրամ,փոխարինումը՝ 12.000 ՀՀ դրամ:
7. 120.000-150.000 կմ փոխվում է շարժիչի հովացման հեղուկը, որի արժեքը կազմում է 50.000 ՀՀ դրամ,փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
8. 70.000-80.000 կմ փոխվում են վառոցքի մոմերը, որոնց 4 հատի արժեքը կազմում է 32.000 ՀՀ դրամ,փոխարինումը՝ 5.000 ՀՀ դրամ:
9. 80.000 կմ փոխարինվում է ԱՓՏ-ի յուղը,զտիչը և միջադիրը,որոնց արժեքը կազմում է՝ յուղը 40.000 ՀՀ դրամ, զտիչը 23.000 ՀՀ դրամ, միջադիրը 10.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 18.000 ՀՀ դրամ:
10. 80.000-90.000 կմ փոխարինվում է գեներատորի փոկը, որի արժեքը կազմում է 17.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 14.000 ՀՀ դրամ:
11. Անվաբացքի կարգաբերման աշխատանքի գինը կազմում է 13.000 ՀՀ դրամ:
12. Անվադողերի փոխարինման և հավասարակշռման արժեքը կազմում է 12.000 ՀՀ դրամ:
13. 20.000 կմ-ը մեկ օգտագործվում է ինժեկտորային համակարգը մաքրող հեղուկ, որի արժեքը կազմում է 10.000 ՀՀ դրամ:
14. 40.000 կմ-ը մեկ փոխարինվում է արգելակման հեղուկը,որի արժեքը կազմում է 6.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
15. 50.000 կմ-ը մեկ փոխարինվում են առջևի արգելակման սկավառակները, որոնց 2 հատի արժեքը կազմում է 80.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
16. 50.000 կմ-ը մեկ փոխարինվում են հետևի արգելակման սկավառակները,որոնց 2 հատի արժեքը կազմում է 102.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
17. Ապակեմաքրիչի 2 ռետինների արժեքը կազմում է 25.000 ՀՀ դրամ:
18. Առջևի 1 հարվածամեղմիչի արժեքը կազմում է 55.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 18.000 ՀՀ դրամ:
19. Հետևի 1 հարվածամեղմիչի արժեքը կազմում է 59.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 18.000 ՀՀ դրամ:
20. Գնդաձև հողակապի 1 հատի արժեքը կազմում է 33.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 8.000 ՀՀ դրամ:
21. Առջևի կայունարարի 2 վռանների արժեքը կազմում է 8.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
22. Հետևի կայունարարի 2 վռանների արժեքը կազմում է 10.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:

E-mail: info@toyota.am
URL: www.toyota.am
Tel: (+374 10) 777 010
Fax: (+374 10) 776 800

ALWAYS A
BETTER WAY

23. Առջևի կայունարարի կանգնակի 1 հատի արժեքը կազմում է 24.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
24. Հետևի կայունարարի կանգնակի 1 հատի արժեքը կազմում է 50.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
25. Առջևի 1 հարվածամեղմիչի պատյանի արժեքը կազմում է 14.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 18.000 ՀՀ դրամ:
26. Հետևի 1 հարվածամեղմիչի պատյանի արժեքը կազմում է 75.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 18.000 ՀՀ դրամ:
27. Դիմապակու արժեքը կազմում է 311.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 50.000 ՀՀ դրամ:

Հարգանքներով
Գլխավոր տնօրեն
Վ.Գզրարյան

Տոյոտա մակնիշի ավտոմեքենաներ N5՝ սպասարվում են հետևյալ գներով

"ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ" ՍՊԸ
Ծովակալ Իսակովի պող. 22
0004 Երևան, Հայաստան

TOYOTA

"TOYOTA YEREVAN" LLC
22 Admiral Isakov ave.,
0004 Yerevan, Armenia

1. 7.000 կմ-ը մեկ փոխվում է շարժիչի յուղը և շարժիչի յուղի զտիչը, որի արժեքը կազմում է 22.590 ՀՀ դրամ/1լիտր շարժիչի յուղը 4.300 ՀՀ դրամ և յուղի տարողությունը 4.3 լիտր, յուղի զտիչը 3.500 ՀՀ դրամ, տափօղակ 600 ՀՀ դրամ:
2. 15.000-20.000 կմ փոխվում է առջևի արգելակման կոճղակը, որի արժեքը կազմում է 37.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
3. 30.000-35.000 կմ փոխվում է հետևի արգելակման կոճղակը, որի արժեքը կազմում է 30.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
4. 14.000կմ-ը մեկ փոխվում է օդի զտիչը, որի արժեքը կազմում է 13.000 ՀՀ դրամ:
5. 20.000 կմ-ը մեկ փոխվում է սրահի զտիչը, որի արժեքը կազմում է 19.000 ՀՀ դրամ:
6. 40.000 կմ-ը մեկ փոխվում է վառելիքի զտիչը, որի արժեքը կազմում է 21.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 20.000 ՀՀ դրամ:
7. 120.000-150.000 կմ փոխվում է շարժիչի հովացման հեղուկը, որի արժեքը կազմում է 20.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
8. 70.000-80.000 կմ փոխվում են վառոցքի մոմերը, որոնց 4 հատի արժեքը կազմում է 12.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 5.000 ՀՀ դրամ:
9. 80.000 կմ փոխարինվում է ԱՓՏ-ի յուղը, զտիչը և միջադիրը, որոնց արժեքը կազմում է՝ յուղը 48.000 ՀՀ դրամ, զտիչը 52.000 ՀՀ դրամ, միջադիրը 6.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 18.000 ՀՀ դրամ:
10. 80.000-90.000 կմ փոխարինվում է գեներատորի փոկը, որի արժեքը կազմում է 28.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 14.000 ՀՀ դրամ:
11. Անվաթացքի կարգաբերման աշխատանքի գինը կազմում է 14.000 ՀՀ դրամ:
12. Անվադողերի փոխարինման և հավասարակշռման արժեքը կազմում է 12.000 ՀՀ դրամ:
13. 20.000 կմ-ը մեկ օգտագործվում է ինժեկտորային համակարգը մաքրող հեղուկ, որի արժեքը կազմում է 10.000 ՀՀ դրամ:
14. 40.000 կմ-ը մեկ փոխարինվում է արգելակման հեղուկը,որի արժեքը կազմում է 6.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 25.000 ՀՀ դրամ:
15. 50.000 կմ-ը մեկ փոխարինվում են առջևի արգելակման սկավառակները, որոնց 2 հատի արժեքը կազմում է 84.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
16. 50.000 կմ-ը մեկ փոխարինվում են հետևի արգելակման սկավառակները,որոնց 2 հատի արժեքը կազմում է 66.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 15.000 ՀՀ դրամ:
17. Ապակեմաքրիչի 3 ռետինների արժեքը կազմում է 29.000 ՀՀ դրամ:
18. Առջևի 1 հարվածամեղմիչի արժեքը կազմում է 74.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 18.000 ՀՀ դրամ:
19. Հետևի 1 հարվածամեղմիչի արժեքը կազմում է 42.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 18.000 ՀՀ դրամ:
20. Գնդաձև հոդակապի 1 հատի արժեքը կազմում է 33.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 8.000 ՀՀ դրամ:
21. Առջևի կայունարարի 2 վռանների արժեքը կազմում է 28.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:
22. Առջևի կայունարարի կանգնակի 1 հատի արժեքը կազմում է 42.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 7.000 ՀՀ դրամ:

E-mail: info@toyota.am
URL: www.toyota.am
Tel: (+374 10) 777 010
Fax: (+374 10) 776 800

ALWAYS A
BETTER WAY

...ԳԱՆ" ՍՊԸ
...Իսակովի պող. 22
...4 Երևան, Հայաստան

TOYOTA

"TOYOTA YEREVAN" LLC
22 Admiral Isakov ave.,
0004 Yerevan, Armenia

23. Առջևի 1 հարվածամեղմիչի պատյանի արժեքը կազմում է 17.000 ՀՀ դրամ, 1 հատի փոխարինումը՝ 18.000 ՀՀ դրամ:
24. Դիմապակու արժեքը կազմում է 447.000 ՀՀ դրամ, փոխարինումը՝ 50.000 ՀՀ դրամ:

Հարգանքներով
Գլխավոր տնօրեն
Վ.Գզրարյան

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/1	<<Toyota>> մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում	-	1500000	3000000	4500000	6000000	7500000	9000000	10000000	11000000	12000000	12500000	13000000	**13000000 (տասներեք միլիոն)**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Պետական պահպանության ծառայություն
ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/h 900011004497
ՀՎՀՀ 00006796

ԿԱՏԱՐՈՂ
«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք. Երևան Ծովակալ Իսակովի 22
ՀՎՀՀ 01557589
«ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ
Հ/h 16062005562600

Պետ՝ Ա. Հովհաննիսյան

Գլխավոր տնօրեն՝ Գ. Գզրարյան

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն